1478. ՉԻԷ. Տէր Խաչատուր արքեպիսկոպոսն Լէօպոլսի յայսմ ամի զմիաբանութիւն առնէ ի մէջ իւր և ժողովրդեանն Լէօպոլսեցւոց. զոր վճիռն Զիկիզմունտ Ալկուզտի Թագաւորին Լեհաց՝ յիշէ յամի 1569, մինչ Գրիգոր Վարագեցին արքեպիսկոպոս ընդ Լէօպոլսեցիսն յատեան Թագաւորին ելին։

1485. ՉԼԴ. Յոհաննէս կաթողիկոսն յայսմ ժամանակի էր ի Կամէնից, զոր յիշէ կոնտակն Նուիրակաց Էջմիածնի (1)։

Տէր Ստեփաննոս արքեպիսկոպոսն Լէօպոլսի, զորոյ եկամուտն յայսմ ամի Նուիրակք Էջմիածնի տրամադրեցին կոնտակաւ, զորոյ միայն սկիզբն դնեմ ասատէն. « Շնորհօք, ևայլն. Եկինք Նուիրակք հրամանաւ Տէր Սարգիս կա» թողիկոսին, մեք՝ Աստուածատուր վարդապետս և Ներսէս կրօնաւորս ի » Կամէնից, ի թվիս ՉԼԴ, և հանդիպեցաւ ի տեղս Տէր Յոհաննէս կաթո» ղիկոսն, և Տէր Ստեփաննոս եպիսկոպոս », և այլն։ Եւ գնացեալ ի Հռոմ՝ դաւանէ զուղղափառութիւն, և յիննոչենտիոսէ Ը ընդունի պարգեւ զխաչ, զմուձէդայ, զոսքէդ (կարճ չապիկք), և զսպիտակ և զկարմիր սրբազան զգեստս. Դարձեալ ի Լէօպոլիս՝ վախճանի։ Իւր կտակն այսպէս, և Կոնդակն Կամէնցու։

1490. ՉԼԹ. Գալուստ, զոր Լեհք Քիլիանոս գրեն, արքեպիսկոպոս Լէօպոլսի Հայոց, յայսմ ամի էր։ — Եզոռ Հերպ. և Ամդր. Լուսկիզիք ի Պատար։ — Սա՝ որպէս թուի, երթալով Ստեփաննոսի արքեպիսկոպոսին ի Հռոմ, նստի փոխանակ նորա, մինչեւ նա դարձաւ ի Հռոմայ։

1493. ՉԽԲ. Խաչատուր արքեպիսկոպոսն էր յայսմ ամի. զոր կոնտակն զանկակատան եկեղեցւոյն՝ որ ի Կամենից՝ յիշէ։

1551. ՌԼ. Ստեփաննոս կաթողիկոսն Էջմիածնի, կամ ընկեցեալ յաթոռոյն, կամ իրովի թողեալ, երթայ ի Հռոմ, և կատարեալ զհնազանդութիւն և զուխտն իւր, գայ ի Լէօպոլիս, և մեռանի յայսմ ամի, որպէս ցուցանէ գերեզմանաքարին նորա գիրն. Hoc sepulcrum est Rev. Patris Stephani Patriarche Majoris Armenie. Rome fuit, et Leopoli adueniens, animam suam Deo tradidit. 1551։

1557. ՌԶ. Գրիգոր Բ արքեպիսկոպոս Լէօպոլսի, էր Վարագեցի՝ յարեւելից, ընդ Կամէնցացւոց՝ յայսմ ամի մարտի Է, զդաշինս առնէ. և ի մէջ այլոց դնեն, զի մի ոք ի քահանայից թէ ի ժողովրդականաց ի դատ կոչեսցէ ի Լէօպոլիս, այլ ինքնին եկեալ ի Կամէնից երկու քահանայիւք և չորեք դատաւորաք զդատ արասցէ։ Եւ յաղագս Նուիրակացն եւս հաստատեցին՝ թէ զինչ տացեն։ Զոր դաշն յերկոցունց կողմանց կնքեալն և կատարեալն՝ յետոյ

1. Կաթողիկոսաց սովորական ցուցակի մէջ չի յիշուիր սա, բայց յիշեն շատ յիշատակարանք ձեռագրաց և Մաղաքիա դպիր ի ժամանակագրութեանն։